

ՆԱԽԻՋԵԻԱՆ ՈՒ ՂԱՐԱԲԱՂ

Չորեքշաբթի, 13 Յունուար 1988ի մեր համարով հրատարակելի էինք Ռամկավար Ազատական կուսակցության կեդրոնական վարչության ՅՈՒՇԱԳԻՐԸ՝ ուղղուած Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցության կեդրոնական կոմիտէի ընդհանուր քարտուղար Միխայիլ Կորպաչովին, յանձնուած սովետեամերիկեան զազաթաթողութիւն առթիւ անոր ընկերակցող պատուիրակութեան, Ուաշինկթընի սովետական դեսպանատան մէջ:

Յուշագիրը, որ արտակարգ հետաքրքրութիւն ստեղծեց եւ մեծ գոհունակութեամբ դիմաւորուեցաւ մեր ժողովուրդին կողմէ, ուշադրաւ էր մի քանի առումներով:

Առաջին՝ ընտրուած ժամանակով (քայմինկ) թէ ոգիով ան կը համընկնէր եւ ամբողջովին կը համապատասխանէր Խ. Միութեան տարածքին՝ ընդհ. քարտուղարին կողմէ գլխաւորուած բարեշրջական շարժումին, որ տնտեսական բարենորոգութեանց եւ ռամկավարացումի պայմաններուն տակ կը ձգտի աւելի բաց եւ արդիւնաւէտ ընկերութիւն մը ստեղծել երկրին բովանդակ տարածքին:

Երկրորդ՝ ՌԱԿ-ի Յուշագիրը իրաւ եւ արդար մէկ անդրադարձն էր ընդհ. քարտուղարին կողմէ զանազան առիթներով եւ բարձրագոյն բեմերէ արտայայտուած այն մտահոգութեան, թէ Խ. Միութեան մէջ ազգային հարցը տակաւին ունի անլոյծ ինչ-ինչ կողմեր, որոնցմէ մէկն է անշուշտ, մեր խորին համոզումով, հայ ժողովուրդի հողային ներքին հարցը:

Երրորդ՝ ՌԱԿ-ի Յուշագիրը, յղուած յանուն համայն սփիւռքահայութեան, զուգահեռ մէկ արտայայտութիւնն է այն պահանջին, որ վերջերս բանաձեւուեցաւ եւ յղուեցաւ խորհրդային վերին իշխանութեանց եւ անձնապէս ընդհ. քարտուղարին՝ զանգուածային հանրագրութեանց թէ անհատական դիմումներու ձեւով, մայր հայրենիքի մէջ: Սկիզբէն եւեթ ՌԱԿ-ի դաւանանքը կազմած է այս եւ նման հարցերու մէջ համակարգում մը մտցնել հայ ժողովուրդի զոյգ հատուածներուն՝ հայրենաբնակ եւ տարաբնակ զանգուածներուն միջեւ, մեկնելով երկրորդը առաջինին երբեք չհակադրելու, երկրորդ հատուածը առաջինին լրացուցիչը նկատելու սկզբունքէն: Պատմական փորձառութիւնը ՌԱԿ-ի մօտ գոյացուցած է այն համոզումը, թէ այս եւ նման հարցերու մէջ վճռական խօսքը, դերն ու դերակատարութիւնը կը պատկանին հայրենի պետականութեան, յառաջադէմ մտաւորականութեան ու ժողովուրդին: Թէ՛ տունալ հարցին մէջ սփիւռքահայութեան կը պատկանի լրացնողի, ամբողջացնողի դերը, հայ ժողովուրդի մէկութեան եւ ամբողջութեան պարունակին մէջ:

Չորրորդ՝ Յուշագիրը, ներքին հողային հարցին նկատմամբ իր բանաձեւումով կ'արտայայտէ այն խոր համոզումը, թէ նոյն այդ հարցին լուծումով միայն պիտի լուծուին Խ. Հայաստանի, ինչպէս նաեւ Ղարաբաղի ինքնավար Մարզի ու Նախիջևանի ինքնավար Հանրապետութեան տնտեսական տագնապները, իրբեւ ազգային, պատմական, ցեղապարական ու մշակութային ամբողջական ինքնութեան կողքին՝ նա'եւ իրբեւ տնտեսական ամբողջական եւ անբաժանելի ինքնութիւնը: Այլ խօսքով՝ Յուշագիրը Ղարաբաղի ու Նախիջևանի վերակցումի պահանջը կը տեղադրէ նաեւ տնտեսական մտահոգութեանց անմիջական ծիրէն ներս՝ զանոնք փաստօրէն նկատելով կենսական անհրաժեշտ տարածութիւն հայ ժողովուրդին համար: Մանաւանդ խորհրդային տնտեսական վերակառուցումի այս օրերուն եւ կեդրոնական իշխանութեանց կողմէ իւրաքանչիւր հանրապետութեան՝ որոնց շարքին նաեւ Հայկական Հանրապետութեան առջեւ դրուած վերակառուցուելու պահանջի պայմաններուն տակ, կենսական կը դառնայ շուրջ 9500 քառ. քիլոմետր ընդհանուր տարածութիւն ունեցող այդ հայապատկան հողամասերուն կցումը սակաւահող Հայաստանին: Մանաւանդ որ, անարդարօրէն Ատրպէյճանին յանձնուած այդ տարածութիւնները, հաշուենկատ զանազան վերապահութիւններու հետեւանքով, տնտեսապէս չեն կրնար ու չեն զարգանար անհրաժեշտ չափով, այնքան ատեն որ անոնք կը զանուին ատրպէյճանական տնօրինութեան տակ, ինչպէս կը մատնանչէ ՌԱԿ-ի Յուշագիրը:

Ու քանի որ խօսքը հոս կը վերաբերի տնտեսականին, այս կապակցութեամբ պէտք է յիշեցնել հայ ժողովուրդին հպարտութիւններէն մէկը հանդիսացող հայորդիի մը՝ Միխայիլ Կորպաչովի խորհրդական Արել Աղանբեկեանին կողմէ վերջերս Լոնտոնի թէ Փարիզի մէջ ձեւակերպուած այն նորարար տեսակէտը, թէ Ղարաբաղի տնտեսական զարգացումին համար անհրաժեշտ է անոր յետագայ վերակցումը Հայաստանին: Եւ նկատի ունենալով դիրքն ու դերը ենթակային, կարելի է անվարան յուսալ, որ այս գործնական ու ճշմարիտ տեսակէտը կ'ընդհանրանայ ու կ'արմատաւորուի խորհրդային կեդրոնական տնտեսական շրջանակներուն մէջ՝ գործնական հետեւանքներով...

Հինգերորդ՝ խորհրդային ղեկավարին ուղղուած Յուշագիրը ուղղակիօրէն կը շօշափէ նաեւ միջազգային-չրջանային հրատապ հարց մը, որ փանթուրանիզմն է իր այլազան ձեւերով եւ իր ներկայացուցած վտանգներով: Արդարեւ, ոչ ոքի համար զաղտնիք է թէ Խ. Միութեան հարաւային եւ հարաւարեւելեան սահմաններուն վրայ, գալով Թուրքիայէն, Պարսկաստանէն, Փաքիստանէն թէ Աֆղանիստանէն, եւ օդտագործելով Խ. Միութեան իսլամ ազգաբնակչութիւն ունեցող հանրապետութեանց մէջ հինէն ի վեր բոյն դրած իսլամական ծայրայեղական հոսանքներն ու մնացուկները, կրօնական մոլեռանդութիւնն է որ սկսած է ներթափանցել՝ պարբար հող ստեղծելով փանթուրանիզմի տարածման համար, որ իր ցեղապաշտ նկարագիրով, գործած աւերներով եւ առ այսօր ներկայացուցած վտանգներով ծանօթ է ոչ միայն հայ, այլեւ չրջանի միւս ժողովուրդներուն, ընդ որս նաեւ՝ ռուսերուն, վրացիներուն եւ ուքրանացիներուն: Հետեւաբար, կարսի զաշնազրի ստորագրման օրերէն ի վեր այդ վտանգին դիմաց պարտադրաբար բաց ձգուած պատուհանը՝ որ Նախիջևանն է, պէտք փակուի անյապա'ղ, միաժամանակ հայահոծ Ղարաբաղով կողէն զօրացնելով Հայաստանը, որ բնական պատուարը կը հանդիսանայ փանթուրանիզմի ներթափանցումներուն դիմաց:

Անշուշտ, առաջին անգամը չէ որ ՌԱԿ-ը նման յուշագիրեր ու դիմումներ կը ներկայացնէ խորհրդային վերին իշխանութեանց՝ միեւնոյն հարցերու դժով: Պաշտօնական թէ կրտս.